

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ՍՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ  
ԿԻՂԻԿԵՅԻՆԵՐԻՆ:

Երկու տարուց աւելի է, ինչ Տ. Մուշեղ եպիսկոպոսը հասնելով Ամերիկա, պատճառ դարձաւ մի խնդրի որ ամենինն գոյութիւն պէտք է չունենար: Գա Տ. Մուշեղ եպիսկոպոսի Ամերիկայում առաջնորդ լինելու կամ չլինելու խնդիրն է, այդ խնդիրը, բանակցութեան նիւթ դառնալով Ս. Էջմիածնի ընդհ. Աթոռի, Սսի Սրբազան կաթողիկոսի և Կ. Պօլսոյ պատրիարքարանի միջև իբրև պաշտօնական դիւանական գործ՝ մինչև լուծումն ստանալը պէտք է չհրապարակուէր. սակայն Սսի Սրբազան կաթողիկոսը հակառակ պաշտօնական բնաւորութեան՝ տպագրական հրատարակութիւններով հրապարակ հանեց այն իւր ուզած ձևով: Այդ տպագրական հրատարակութիւններից մէկն է և նորին Սրբութեան թուղթը առ ամերիկահայ Կիլիկեցիս, գրուած 1911 թ. դեկտեմբերի 27-ին, որ տպուած է Կ. Պօլսոյ, Ամերիկայի և Ռուսաստանի հայ թերթերում:

Այդ թուղթը, իւր բովանդակութեամբ չի համապատասխանում իրողութեանը և իւր բառերով, ակնարկութիւններով ու դարձուածներով՝ չի պատշաճում գրողի վեհ աստիճանին:

Սսի Սրբազան կաթողիկոսի ցանկութիւնը եղել է իւր աթոռին ընդհանրականութիւն տալ Տաճկաստանում ձեռնադրելով եպիսկոպոսներ, որոնց առաջ բաց լինի ամբողջ Տաճկաստանը մինչև պատրիարքական աթոռը, ուրեմն և իւր ձեռնադրած եպիսկոպոսների միջոցով անօրինել տաճկահայոց բոլոր հոգևոր գործերը, և Սսի աթոռը դառնայ ամբողջ տաճկահայոց Հայրապետութիւն: նորին Սրբութիւնը իւր այս ցանկութիւնը սկզբներում յայտնում էր զանազան դէպքերում աղօտ կերպով, թանձրացած կերպով երևան

հանեց բուն ճիգերով ձգտելով Տ. Մուշեղ եպիսկոպոսին առաջնորդ կարգել նաև Տաճկաստանի սահմանից դուրս— Ամիրիկայում, որ Մայր Աթոռիս տէրունի թեմն է:

Նորին Սրբութեան այս ցանկութիւնը հակառակ է եկեղեցական կանոններին, որ և բացատրած է ընդհանրական Հայրապետի Ամենապատիւ Տ. Տեղակալի ստորև մէջ բերուած թղթի մէջ. այդ ցանկութիւնը հակառակ է և ազգային շահերին, որովհետև Տաճկաստանում Սսի աթոռի ընդհանրականութիւն ստանալուց յետոյ կը թուլանայ և կը խղուի այն հոգևոր բարոյական կապը, որ ի դէմս Մայր Աթոռի միացնում է Տաճկաստանի և Ռուսաստանի հայութեան մեծ հատուածները: Եւ որովհետև Սսի սրբազան կաթողիկոսի ցանկութիւնը հակառակ է թէ եկեղեցական կանոններին թէ ազգի շահերին, ուրեմն և պէտք է չքաջալերուի: Բայց դժբաղդաբար, ինչպէս ամեն բանում, նոյնպէս և այս դէպքում քաջալերութեան ձայներ են լսուում: Սսի աթոռը մասնաւոր աթոռ է, այդպէս էլ պէտք է մնայ, իրաւունք ունենալով միայն իւր իրաւասութեան տակ եղած վիճակների համար ս. Միւռոն օրհնել և եպիսկոպոսներ ձեռնադրել: Նրա եպիսկոպոսները պէտք է գործեն միայն նրա իրաւասութեան տակ:

Տ. Մուշեղ եպիսկոպոսը ձեռնադրուած է Սսի սրբազան կաթողիկոսից Ազանայի առաջնորդ: 1909 թուի Ազանայի կոտորածից յետոյ նա վտարանդի ընկաւ առաջ Եւրոպա և յետոյ Ամերիկա: Եթէ Սսի եպիսկոպոսները Տ. Մուշեղ սրբազանի նման Սսի շրջանից դուրս պաշտօնի հետամուտ լինեն ու գանեն, Սսի աթոռը միշտ էլ կարող անձերի սով պիտի գգայ: Պէտք է այն հաստատ սկզբունքին հետևել, թէ Սսի ուխտեալ պաշտօնեան իւր ուխտին գրգռելով միայն կարող է Սսի իրաւասութեան սահմանից դուրս դաշտօն որոնել. այդպիսի վարմունքը պէտք է չքաջալերուի մանաւանդ Սսի սրբազան կաթողիկոսի կողմից:

Տ. Մուշեղ սրբազանը այն ժամանակ հասաւ Ամերիկա, երբ այն տեղ առաջնորդ չկար: Ի Տ. Հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոսը նրա անունը հանեց առաջնորդական

ընտրելիները ցանկից. որովհետև բացի այն՝ որ նա Սսի համար եպիսկոպոս ձեռնադրուած լինելով՝ վտարանդի Ամերիկա հասած հիւր էր, այստեղ ունէր և հակառակորդները մի մեծ խումբ: Ուլ հետևել է Ամերիկայում հրատարակող «Ազգ» և «Հայրենիք» լրագրներին, գիտէ, որ երկպառակուած ժողովուրդը Տ. Մուշեղ սրբազանի պատճառով աղմկալից ժողովներում կռիւներով ընդհարումներ է ունեցել, ուր միջամտել է ոստիկանութիւն:

Հակառակ այն բանին, որ հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Սրբազնագոյն կաթողիկոսը առաջնորդացունների ցանկից եղծել էր Տ. Մուշեղ սրբազանի անունը և ինքն հաւաստիացնում էր, թէ վարչական պաշտօնների ձգտում չունի, այլ Ամերիկայում գտնուելը պատեն առիթ համարելով պէտք է որպէս պարզ ուսանող՝ միայն ուսման և գիտութեան պարապի, նա Ամերիկահայ թեմում, որ ունէր իւր օրինական հոգևոր վարչութիւնը. ինքնիշխանաբար սկսում է եկեղեցիներ օծել, սեղաններ հաստատել, և հոգևոր պաշտօնեաներ ձեռնադրել, կատարելով վիճակաւոր եպիսկոպոսի և հոգևոր հովուի բոլոր պաշտօնները:

Տ. Մուշեղ սրբազանի այս անկանոն գործողութիւնների առաջն առնելու համար Մայր Աթոռից գրուեց Կ. Պօլսոյ պատրիարքարանին և Սսի սրբազան կաթողիկոսին. վերջինս հակառակ կենդրոնական վարչութեան որոշման և եկեղեցական կանոններին՝ սկսեց Տ. Մուշեղ եպիսկոպոսի վարմունքը քաջալերել. թելադրութիւններ և դիմումներ էր անում, որ Տ. Մուշեղ եպիսկոպոսը հաստատուի ամերիկահայոց առաջնորդ. թղթեր է հրատարակում, որոնք որքան և ի վերին երեսս հրապուրիչ են միութեան, սիրոյ և խաղաղութեան յորգորներով, այնքան էլ, ըստ էութեան, խախտում են եկեղեցու խաղաղութիւնը, միութիւնը և ընդհանրականութիւն ապահովող կարգ ու կանոնը, առաջ մղելով Տ. Մուշեղ սրբազանի առաջնորդութեան խնդիրը մի թեմում, որ իւր իրաւասութիւնից դուրս է, և ձգտելով ասպարէզ բանալ իւր ձեռնադրելի եպիսկոպոսների համար բովանդակ Տաճկաստանում մինչև պատրիարքական աթոռ:

Ի՛նչ կը լինի եկեղեցու դրութիւնը, երբ եպիսկոպոսութեան ձգտող ամեն մի հոգևորական ձեռնադրուելու համար դիմի այս կամ այն աթոռին, հաւատարմութեան երդումով կապուի իւր ձեռնադրողի աթոռի ու նրա իրաւասութեան տակ եղող թեմի հետ, և սպա դրժելով իւր երդմանը, լքանելով իւր վիճակը, իւր հաճոյքի համեմատ մանի ուրիշ թեմ, ուրիշ աթոռի յարելու դիւրութիւն ունենալով:

Ի՛նչ կը լինի եկեղեցու դրութիւնը, երբ կաթողիկոսական աթոռները իրանց դիմող ամեն մի փառասէր հոգևորականի ձեռնադրեն անխտիր և ազատութիւն տան գործելու ո՛ւր և ինչպէս կամենայ:

Եկեղեցու կանոնները, և յատկապէս Երուսաղէմի ժողովինը, սահման են դրել թէ՛ կաթողիկոսների, թէ՛ ձեռնադրող եպիսկոպոսների և թէ՛ ընդհանրապէս հոգևորականների գործողութեան շրջանակին: Սահմանուած շրջանից դուրս եկողները պէտք է նկատուեն որպէս եկեղեցու կանոնները ոտնահար անողներ և շփոթութիւն առաջ բերողներ եկեղեցական բարւոք կառավարութեան մէջ: Ամեն մի հոգևոր պաշտօնեայի պարտքն է խստիանել այդպիսի անկանոնութիւնները եկեղեցական կանոնների նախանձախնդրութեամբ և սզգային շահի գիտակցութեամբ:

Եթէ Ամերիկայի հայերն ընտրեն և Տ. Մուշեղ եպիսկոպոսը յանձն առնի Սսի սրբազան կաթողիկոսի իրաւասութիւնից դուրս գալ ու սահմանուած կարգով մանել ս. Էջմիածնի ընդհ. աթոռի իրաւասութեան տակ, հնարաւոր է որ նա հաստատուի Ամերիկայի հայոց առաջնորդ: Առ այս, ինչպէս յիշուած է ընդհ. Հայրապետի Տեղակալի թղթի մէջ, հարկաւոր է որ նա կանխապէս ստանայ իւր ձեռնադրող Սսի սրբազան կաթողիկոսի հաւանութիւնը և Կ. Պոլսոյ կենդրոնական վարչութեան հաճութիւնը, որովհետև նա իբրև տաճկահպատակ, ձախող հանգամանքում դուրս գալով Ամերիկայի առաջնորդից պաշտօնավարելու է Պատրիարքարանի իրաւասութեան տակ: Սակայն այդպիսով խնդիրը թէև ըստ էութեան կը փակուի, բայց բաց

կը մնայ խնդրի բարոյական կողմը: Չէ որ Տ. Մուշեղ սրբազանը ձեռնադրուելիս՝ ուխտել է հաւատարիմ մնալ Սսոյ աթոռին և պաշտօնավարել նրա իրաւասութեան տակ:

Սսոյ աթոռը ընդհանրական հայ եկեղեցու մի կարևոր անդամն է և կարօտ է ձեռնհաս, անձնուէր առաջնորդներին. Սսի սրբազան կաթողիկոսը պէտք ունի կարող և ներհուն խորհրդականներին ու գործակիցներին: Կիլիկիայի Հայոց դրութիւնը յայտնի է.—լեզուակորոյս ժողովուրդը աղքատութեան, կեանքի և գոյքի անապահովութեան պատճառով անջան որս է կեղեքիչներին և հաւատի վաճառականներին: Արդ Սսի աթոռի եպիսկոպոսները եթէ ազատութիւն ունենան իրանց կամքին համեմատ տեղից տեղ փոփոխուելու հանգիստ և շահաւէտ պաշտօններ ձեռք բերելու համար այս կամ այն աթոռի իրաւասութեան տակ մտնելու, ո՞վ պէտք է աջակից լինի Սսի սրբազան կաթողիկոսին իւր բարի ձեռնարկութիւններին մէջ, ո՞վ պէտք է հոգայ տառապեալ ժողովրդի հոգևոր պէտքերը, սփոփելով նրան իւր տառապանքի օրերում: Այն ժողովրդի, որի հոգևոր և մարմնաւոր ցաւերը չկարողանալով ամօքել Սրբազան կաթողիկոսը, իւր խիղճը հանգստացնելու համար իւր ստորագրութեանը աւելացրել է «հրաժարեալ» բառը:

«Մեզ ուղղեալ Չեր նոյեմ. 23 ամսաթիւ հանրագրութիւնը տարիներէ ի վեր վշտակոծ որտեքնիս խորապէս յուզեց և խռովեց:

Մենք Ազգին և Եկեղեցիին օգնութեան պահպանութեան համար համազգային միութեան իղձերով համակուած՝ գիշեր ու ցերեկ կաղօթենք, որ Աստուած նոյն հոգով զօրացնէ ի սփիւռս աշխարհի վարատական Հայութիւնն, առանց յարանուանական և դաւանական խտրութեան, և հնարաւորութեան սահմանին մէջ կաշխատինք նոյնին իրականացման համար: Դուք էջմիածնի Տեղապահին գրչի հարուածէն յուսարեկ՝ արտօնէութիւն կը խնդրէք սեպհական Եկեղեցի և եկեղեցականութիւն կազմակերպելու:

Սխալ և կործանարար յղացում, մանաւանդ անջնջելի արատ Կիլիկիեացոց, որ արդարացի համբաւն ունին իբրև առնաբար սուրիններու և եաթաղաններու կուրծք աւոզ, գրչի հարուածէ մը ընկրկիլ: Հայ եկեղեցին պառակտել, «մի հօտ և մի հովիւ» Աստուածա-

յին սկզբունքն ուրանալ, կը նշանակէ չը ճանչնալ մեր հայերու անսասան հաւատքը լայնախոհ ոգին մեր սիրած եկեղեցւոյն, որուն դարաւոր կեանքն եղած է յաղթական նահատակութիւն:

Պոլսոյ Բարձրահորհ և Էջմիածնի Ամենապատիւ Տեղապահներէն անհամեմատ հզօրագոյններ անցեալին մէջ ոգի ի բոլին աշխատած և չեն յաջողած Հայոց եկեղեցւոյ միութիւնը փնտնելու, Բիւղանդեան մոլեռանդ կայսերը, անհամարներու բանակներով, Հոռովայ Պապեր՝ հմայիչ պալիոններով, չողարձակ խոյրերով և քաղաքական խոտուամներով չկարողացան Հայերը գրաւել և խորթացնել. Տեղապահի մը քմահաճ որոշման մը հետեանօք, որուն դէմ Խրիմեաններու դամբարանները կը բողոքեն, սեփական եկեղեցի կազմելու գաղափարն յղանալ Ազգի բազմամուն և յողնատեսակ ցաւերուն մեծագոյնն է:

Հակառակ Գրիստոնէութեան տիեզերական սիրոյ վարդապետութեան, հակառակ եկեղեցական օրինաց Էջմիածնի և Կիլիկիոյ հայրապետական Աթոռներուն ընդմէջ յերիւրեւած խտրականութիւնը կարգ մը կարճամիտ փառասէրներու հնարքն է, որ թէև դարերու հնութիւնն ունի, բայց իբրև ժանգոտած ու մամուլապատ հնութիւն մերժուած ու դատապարտուած է ժամանակի ողջմտութենէն, ազգ. միութեան ոգիէն և հասարակաց կարծիքէն:

Մեզ համար եղած չէ, ներկային մէջ ալ չկայ և ապագային չպիտի ըլլայ Էջմի.սձնակաճութիւն եւ Կիլիկեցութիւն. մահացու սերմեր՝ թշնամի ձեռքերէն նետուած եկեղեցւոյ մէջ, և շահն մշակներ երազած են անոնց աճումն ու բարգաւաճումը, բայց հայութեան ըմբոստ ոգին խեղդած է:

Մենք հայ եկեղեցւոյ միութեան պաշտօնեայ, բանիւ և գործով կոռուած ենք միութեան սպառնացող ներքին և արտաքին բոլոր հնարքներուն և վտանգներուն դէմ, և այսուհետև ալ պիտի շարունակենք նոյնը՝ անխախտ հաւատքով և անխաբ յոյսով, թէ ս. Էջմիածնի ապագայ գահակալները մեզմէ շատ աւելի նախանձախնդիր և ցաւակից ազգի միութեան և անսահման վշտերուն, միջոց չպիտի թողուն տեղապահներու նեղմիտ և կամայական վճիռներուն, և պիտի մաքրագործեն ամեն կեղտ ու խտիր, և հայութիւնը պիտի պահպանէ իր գոյութիւնը մայրենի եկեղեցւոյ ծոցին մէջ, իբրև «Մի հօտ և մի հովիւ» որուն համար ենք՝

ՄԵՏԱՄՈՒՆԿ ԱՊՕՐԱՐԱՐ

Հրժ. Ստեանկ կարօղիկոս Կիլիկյոյ

1911 թ. դեկտ. 27. Սիս.

(Կոչնակ շարաձաթերթ № 6 40 փետր. 1912)